## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2011Թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հաստատել եւ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի՝ հրապարակել «Սահմանադրական դատարանի 2011թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումը» (Հաղորդումը կցվում է):

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի՝ Հաղորդումն ուղարկել պետական եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

17 հունվարի 2012 թվականի
ՍԴԱՈ -1